ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ
ՀՀ վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայկական պետական մանկավարժական համալսարանի հասարակագիտության ամբիոնի դոցենտ, դասախոս

ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՈՒՄԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծել է իրավունքի և իրավահասկացության վերաբերյալ արդի հայեցակարգային մոտեցումները, դրանց բովանդակային առանձնահատկությունները, տեսական և կիրառական նշանակությունը: Իրավունքի ընկալումն իրենից ներկայացնում է մտավոր գործունեության առանձնահատուկ տեսակ: Ընկալման խնդիրն ավելի ու ավելի հաճախ է գրավում ժամանակակից հետազոտողների ուշադրությունը, այդ թվում՝ նրանց, ովքեր զբաղվում են գիտության փիլիսոփայության, ճանաչողության փիլիսոփայության, իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրներով: Ուստի իրավունքի ընկալման գործընթացի տեսական մեթոդաբանական վերլուծությունն անխուսափելիորեն շոշափում է դրա մեթոդաբանության հարցերը, որոնց մշակումն ավանդաբար առաջնահերթ է համարվում իրավունքի տեսության համար:

Իրավահասկացման հիմնախնդիրը, ինչ խոսք, շատ ավելի մեծ նշանակություն ունի իրավական գիտության համար, որի առարկան էլ հենց կազմում են բուն իրավական երևույթները: Միայն ճիշտ, հստակ պատկերացում կազմելով այն մասին, թե ինչ է իրավունքը, կարելի է պարզել ոչ միայն իրավաբանական գիտության զարգացման և արդյունավետության բարձրացման հեռանկարները, այլև լուծել նորմաստեղծման, իրավունքի կիրառման և մեկնաբանման, օրինականության և իրավակարգի, քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության և իրավական պետության կառուցման խնդիրները:

Հիմնաբառեր- իրավունք, օրինականություն, իրավական կարգ, իրավական պետություն, իրավական գիտություն, իրավական ըմբռնում, իրավական գիտելիքներ:

Ներածություն

Իրավահասկացման մասին գիտական հիմնախնդրի գործընթացում բավականին հազվադեպ են գիտնականները վերլուծում իրավաճանաչողության խնդիրները: Սակայն եթե այս հարցերը արծարծվում են, ապա իրավաճանաչողության վերլուծությունը անց է կացվում դասական պարադիգմի շրջանակներում: Իրավահասկացման որոշ տիպեր ճանաչողության դասական տեսության ժառանգություն են: Իրա-վահասկացման տարբեր մոդելներ ու տիպեր չի կարելի անվանել իրավունքի տեսություն ոչ միայն նրա համար, որ տեսությունը սոցիալական երևույթների ավելի լայն շարադրանք ու նկարագրություն է, այլ նաև նրա համար, որ հումանիտար գիտությունները հասարակական գիտությունների նման չունեն խստություններ ու ֆորմալ կողմեր, օբյեկտիվ կողմեր ու ճշմարտություններ: Իրավահասկացման տարբեր տեսությունների առկայությունը իրավաբանական գիտելիքի նորմալ ու անխուսափելի բնութագիրն է:

Իրավունքի ընկալումն իրենից ներկայացնում է մտավոր գործունեության առանձնահատուկ տեսակ: Իրավունքի ընկալման վերաբերյալ մշակութաբանական մոտեցումը չի բացառում նրա էության գործիքային բաղադրիչը, ներկայումս իրավունքը շարունակվում է դիտարկվել որպես սոցիալական կարգավորման և պաշտպանման միջոց: Դրա հետ մեկտեղ իրավունքի ընկալումը որպես ազգային (իսկ հետագայում նաև միջազգային) մշակույթի երևույթի հանգում է «իրավունք» և «օրենք» հասկացությունների տարբերակմանը, իսկ դա իր հերթին, կանխորոշում է անվերջ բանավեճ առ այն, թե ինչ է իրավունքը և ինչպես է այն հարաբերվում կարգավորիչ-պաշտպանիչ այլ համակարգերի (օրենսդրության, կրոնի, բարոյականության, սովորույթների) հետ:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության մեթոդաբանական հիմքում դրված են վերլուծական, համեմատական և համակարգային մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս բազմակողմանիորեն ուսումնասիրել իրավական նորմաստեղության էությունը և զարգացման միտումները: Աշխատանքի ընթացքում իրականացվել է ազգային և միջազգային իրավական ակտերի, ինչպես նաև գիտական գրականության վերլուծություն՝ նորմաստեղծ գործընթացի տեսա-

www.ardaradatutyunjournal.com

կան և գործնական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով: Ստացված եզրակացությունները հիմնված են տեսական դրույթների համադրման և իրավական պրակտիկայի քննության վրա:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Իրավունքի ժամանակակից տեսությունում իրավահասկացման խնդիրը շատ սուր է դրված տեսական և գործնական հարթությունների վրա նախասիրությունների բացակայության պատճառով: Հետվերակառուցման բարեփոխումները հզոր ազդեցություն են ունեցել իրավաբանության վրա՝ զրկելով նրան տասնամյակներ շարունակ կայացած ստուգված սահմանումներից ու հասկացության ձևերից: Եթե հաշվի առնենք, որ դեռևս Կանտի ժամանակներից, ով հեգնում էր իրավաբաններին, թե ինչ է իրավունքը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք ծնում է գլոբալիզացիայի գործընթացը, որն արմատապես փոխում է ազգային պետության մասին սովորական պատկերացումը, ապա պարզ կդառնա, որ իրավահասկացման հարցերը պահանջում են նոր հետազոտություններ, որոնք հաշվի պետք է առնեն փոփոխության փիլիսոփայությունը, քաղաքագիտությունը, հասարակական պահանջմունքները: Ինչպես նշում է հայտնի ամերիկացի գիտնական-իրավագետ Լ. Ֆրիդմենը «իրավունքի ճիշտ սահմանում տալը բարդ խնդիր է, իրավունք բառը առօրյա կիրառության համար է, այն մեր խոսակցական բառապաշարի մի մասնիկն է: Այն ունի բազմաթիվ նշանակություններ, որոնք փխրուն են ինչպես ապակին, անկայուն ինչպես օճառի պղպջակը ու անորսալի ինչպես ժամանակը»[1]:

Իրավահասկացման խնդիրները, որոնք կապված են իրավունքի բնութագրական հատկանիշների, նրա էության բացահայտման հետ, վերագրվում են առավել բանավիճային ու կարևոր խնդիրների շարքին իրավունքի տեսության մեջ: «Իրավաբանության զարգացման ամբողջ պատմությունը տարբեր մոտեցումների հակադրության և հարադրության պատմություն է, որ կա իրավունքի էություն՝ որպես սոցիալական կյանքի հատուկ երևույթ»,-ենթադրում է Վ.Վ.Լապաևան[2]»: Իրավահասկացման մասին հարցը կապված է գիտնականների գաղափարական ու քաղաքական նախասիրությունների հետ: Պետք է ի նկատի ունենալ, որ իրավաբանական դոկտրինի համար իրավահասկացման մասին հարցը կենտրոնական է: Ինչպես գրում էր հայտնի իրավաբան Ե.Ն. Տրուբեցկոյը «իրավունքի հասկացության բավարար սահմանման բացակայության դեպքում չեն կարող անցկացվել պարզորոշ սահմաններ իրավագիտության և այլ գիտությունների միջև, իսկ այդպիսի սահմանների բացակայության ժամանակ իրավագիտությունը միշտ ռիսկի է դիմում կամ չներգրավել իր առարկան կամ փոխառել ուրիշներից, իր համար օտար գիտելիքների ոլորտից»[3]: Առանց իրավունքի մասին գիտական պատկերացման անհնար է խոսել այլ իրավական երևույթների մասին, քանի որ չկան հիմքեր, այլ արժեքային-նորմատիվ համակարգերից սահմանազատման համար: Դրա համար էլ չի կարելի չհամաձայնվել Մ. Ի. Բայտինի հետ, ով նշում է հետևյալը. «Իրավունքի հասկացության մասին հարցը ելակետային է իրավունքի տեսության մեջ: Նրա լուծումից ուղիղ կախվածության մեջ հասկացվում են ու մեկնաբանվում բոլոր մնացած իրավական երևույթները... միայն այն մասին ճիշտ, պարզորոշ պատկերացման հիման վրա, թե ինչ է իրավունքը կարելի է սահմանել ոչ միայն իրավագիտության, այլև նորմաստեղծման, իրավունքի կիրառության ու մեկնաբանության արդյունավետության բարձրացման ուղիները և զարգացման հեռանկարները, օրինականության ու իրավակարգի ապահովումը, քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության և իրավական պետության ստեղծումը»[4]:

Մ.Ի. Բայտինը հանդես է գալիս իր ծավալուն մենագրության էջերին իրավունքի լայն հասկացության օգտին: Սակայն նորմատիվ իրավահասկացման նրա դիրքորոշումը հենց նրա դեմ է դուրս գալիս: Նրա տեսանկյունից ճիշտ իրավունքը ճանաչված է պետության կողմից և ապահովված է հարկադրանքով: Ներկայիս հասարակական զարգացումները պարտադրում են գիտնականներին լինել ազատական-իրավաբանական իրավահասկացման կողմնակիցներ, որն ամրագրված է շատ պետությունների, այդ թվում ՀՀ Սահմանադրության դրույթներում, որոնք կապված են իրավահասկացման բնական-իրավական տիպի հիմքի հետ (որպես իրավունքի գերակա աղբյուր ճանաչվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու պարտականությունները):

Իրավունքի փիլիսոփայության հիմնական հարցը իրավահասկացման մասին հարցն է: Գրական աղբյուրներում արդարացիորեն նշվում է, որ «իրավունքի հասկացման խնդիրը վերաբերում է հավերժական հարցերի թվին»[5]: Նրա լուծումը ընկած է իրավունքի ցանկացած տեսության հիմքում, նրա լուծման վրա հիմնվում են իրավաբանության հիմնդրույթները և պետական-իրավական դոկտրինը, նրա իմաստավորման նպատակի հետ ստեղծվում են առանձին պարադիգմեր: Այն իրենից ներկայացնում է հասարակության պետական-իրավական կյանքի արժեքային-աշխարհայացքային իդեալների համակարգ, որոնք կապված են իրար հետ ընդհանուր տրամաբանությամբ՝ իրավունքի իմաստի որոնման մեջ: Գիտնականների շրջանում միասնականության բացակայությունը, թե ինչը պետք է համարել իրավունք, բերում է նաև մտածված ու

www.ardaradatutyunjournal.com

կշռադատված իրավական քաղաքականության բացակայության:

Բարեփոխումների ընթացքում տեղի է ունեցել արժեքային աստիճանակարգի տեղաշարժ հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի իրավաբանական աշխարհայացքում: Առաջին տեղ են եկել լիբերալ իդեալները ու իրավունքի արժեքները, իսկ պետական իշխանության սահմանադրական պատասխանատվության գաղափարի դոմինանտը բերել է նորմատիվ իրավահասկացման հետազոտությունների մեծ քանակի առաջացում և իրավաբանական պոզիտիվիզմի բացառում, որոնց հիման վրա կառուցվում է ժամանակակից պետականությունը:

Իրավահասկացման խնդիրը վերջին տարիներին գտնվում է ոչ միայն հայրենական այլ նաև արտասահմանյան իրավաբանության ուշադրության կենտրոնում: Արտասահմանյան, իրավագետները փորձում են գտնել պատասխաններ, որոնք համարժեք են հետինդուստրիալ դարաշրջանի ու հետմոդեռն սոցիալական փիլիսոփայության կոչերին: Հեղինակները նախատեսում են իրավահասկացման խնդրի պայմանավորվածությունը հասարակական-քաղաքական և ազգային պարադիգմաների հարադրությամբ[6]:

Յուրաքանչյուր հիմնադրույթ բովանդակում է պատասխաններ այն հարցին, թե ինչ է իրավունքը, ինչումն է նրա էությունը, ինչպիսին են նրա իդեալները, արժեքները և այլն: Ա.Ի. Օվչիննիկովը կարծում է, որ կան իրավահասկացման խնդրի լուծման երեք միջոցներ: Առաջինը կայանում է առավել հավատարիմ ու որոշակի շահերին համապատասխանող ժամանակակից հասարակության ընդունման մեջ, ըստ արևմտյան հեղինակների, իրավունքի դասական եվրոպական փիլիոփայության ու համապատասխան իրավահասկացման՝ բնական իրավունքի լիբերալ-անհատական տարբերակի, որը հայտնի է լիբերտարիզմ անվամբ, մոդեռնիզացիայի մեջ: Երկրորդ միջոցը հարցի բացառումն է նրա՝ ռացիոնալ մեթոդներով չլուծվելու առնչությամբ ու իրավահասկացման այս կամ այն տեսակի հանդեպ կողմնորոշումը իրավունքի հետազոտության ֆորմալ-դոգմատիկ, սոցիոլոգիական և պատմական- մշակութային միջոցների սահմանման մեթոդոլոգիական նպատակով: Երրորդը հիմնվում է երեք մոտեցումների՝ իրավունքի հանդեպ լայն մոտեցումը, սինթետիկ իրավաբանության գաղափարը, իրավունքի ինտեգրատիվ տեսությունը, որոնք կառուցված են սինթեզի, ինտեգրացիայի փորձի վրա[7]: Ըստ մեզ այս տեսանկյունը կարելի է ճանաչել որպես ճիշտ միայն իրավահասկացման մեթոդաբանական և իմացաբանական առումների վերլուծությունից հետո:

Որպեսզի բացահայտենք իրավահասկացման էությունը, անհրաժեշտ է դիտարկել տեսական-իրավական պատկերացումները, տվյալ գործընթացի հետազոտության ու սահմանման մեթոդաբանության հիմքերը: Իրավահասկացումը կամ էլ իրավունքի հասկացումը հանդիսանում է իրավունքի էությունը բացահայտելու գործընթաց: Սակայն իրավաբանության մեջ առկա են տարբեր մոտեցումներ իրավահասկացման սահմանման հանդեպ:

Առկա են տարբեր մոտեցումներ նաև իրավահասկացման խնդրի հանդեպ: Իրավունքի ժամանակակից տեսության մեջ այն գիտական կատեգորիա է, որն արտացոլում է մարդու մտածողական գործունեության գործընթացը և արդյունքը, որը ներառում է իրավունքի ճանաչում և որպես ամբողջական երևույթի գնահատական:

Այս տեսանկյունից իրավահասկացման գործընթացը այսպիսի դեպքում հաճախ մեկնաբանվում է որպես իրավունքի էության ճանաչման ու իրավագիտակցության գնահատողական գործունեության գործընթաց, որն իրենից ներկայացնում է մտածողության երկու հակասական գործընթացների մեխանիկական միավորում: Գիտնականը քննադատորեն է վերաբերում Վ.Ս. Ներսեսյանցի դիրքորոշմանը, համաձայն որի իրավահասկացումը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրավական էության ու երևույթների միասնություն[8]: Ա.Ի. Օվչիննիկովը ենթադրում է, որ իրավունքի էությունը սահմափակվում է էության ու երևույթի դասական դուալիզմի շրջանակներում: Տարբեր փիլիսոփայական համակարգերում այսպիսի հարաբերակցությունը լուծվում է յուրատիպ կերպով, բայց ամենուր էությունը հանդես է գալիս որպես ինքնուրույն էության սուբստանցիոն միջուկ: Իրավունքը դիտարկվում է որպես ինքնին օբյեկտիվ երևույթ, ընդհանուր որակ, որի հատկանիշները և որակական բնութագրերը ընդհանրացնելով մոտենում ենք էությանը: Չնայած նրան, որ իրավահասկացում եզրույթը ակտիվորեն կիրառվում է այս աքսիոմների ու նախադրյալների նշանակման համար, որոնք ընկած են ցանկացած իրավական տեսության հիմքում, ակադ., Վ. Ներսեսյանցի մոտ իրավահասկացման գործընթացը իրավունքի ճանաչման գործընթաց է, այսինքն տեսական գործընթաց: Գիտնականը առաջարկում է դիտարկել այդ հարցը հերմենեվտիկ-ֆենոմենոլոգիական տեսանկյունից, որն ըստ էության ընդունելի է իրավունքի զարգացման ժամանակակից միտումների համատեքստում:

Ա.Ի. Օվչիննիկովը շեշտադրում է, որ իրականում այն ոչ միայն ճանաչողական գործընթաց է, որի ընթացքում սահմանվում է ճանաչողությանը, հակադրվող ինչ-որ մի երևույթ, այսինքն իրավունք, որն ամրագրված է այլ նորմատիվ կարգերի ու սոցիալական օբյեկտների շարքում, այլև գոյաբանական ֆենոմեն: Գիտնականը հարց է տալիս: Ի՞նչպես ենք առանձնացնելու իրավունքը սոցիալական

www.arbarabatuntyunjournal.com

երևույթների բազմությունից՝ չիմանալով իրավունքի հատկանիշները, չտիրապետելով նրա մասին տարրական պատկերացումների: Ինչպես կարող ենք գտնել այն մեթոդը, որի օգնությամբ հնարավոր է մոտենալ իրավունքի որոնվող էությանը: Դիցուկ նախքան առարկայի ճանաչումը, այսինքն իրավունքը, հնարավոր է եղել սահմանել ճանաչման միջոցները գիտական մեթոդների ձևում: Հարց է առաջանում. ինչպես ենք բացահայտել այդ ուղիները: Որպեսզի գտնենք հարցի պատասխանը, անհրաժեշտ է մեկ այլ մեթոդ, իսկ վերջինիս համար հաջորդը և այդպես շարունակ, այս շրջանից ելքը հնարավոր է միայն առարկայի որոշ էական հատկանիշների սահմանմամբ[9]: Իրավահասկացումը ելնում է առարկայի ինտուիցիայից՝ իրավունքից:

Ա.Ի. Օվչիննիկովը վերլուծում է իրավահասկացման գործընթացը ճանաչման ու մեթոդոլոգիայի ոչ դասական ու հետդասական տեսությունների դիրքերից:

Դրա հետ մեկտեղ մեթոդաբանական տեսանկյունից նշված երկու հակադիր մոտեցումներում կան ընդհանուր գծեր, երկու դեպքում էլ խոսքը գնում է իրավունքի հասկացության սահմանման մասին: Չնայած նրան, որ իրավահակացման հարցը աստիճանաբար ստանում է նոր ձևեր (ինչպես և հիմնական հիմնադրույթների, տեսությունների, հասկացությունների ինտուիցիայի մասին) նրա իմաստը անխուսափելիորեն ուղղորդվում է դեպի այն հարցը, ի՞նչն է իրենից ներկայացնում իրավունքը:

Ուսումնական գրականության մեջ իրավահասկացման հանդեպ ավանդապես դիտարկվում են իրավական մտքի մի շարք ուղղություններ կամ դպրոցներ: Այսպես, օրինակ՝ ինչպես նշում է Վ.Ա. Տումանովը տվյալ ուղղությունները իրենցից ներկայացնում են իրավահասկացման տիպեր, այն առանձնացնում է երեք տիպ՝ բանական իրավունք, իրավաբանական պոզիտիվիզմ և սոցիոլոգիական իրավաբանություն[10]: Մեկ այլ գիտնական Վ.Ի. Պոպովը մեկնաբանում է իրավահասկացումը որպես փիլիսոփայական-իրավական կատեգորիա, որոնք վերաբերում են դոկտրինալ իրավագիտակցության ոլորտին, որը ներգրավում է իրավունքի ու իրավական երևույթների գործարկման, զարգացման, առաջացման օրինաչափությունները: Իրավահասկացումը ներկայացված է կոնկրետ իրավական գաղափարների տեսակետների համակարգերի, տեսական կառույցների տեսքով, որոնք բովանդակում են ինչպես գոյաբանական, այնպես էլ իմացաբանական առումով որոշակի օրինաչափություններ[11]:

Այլ հեղինակներ ենթադրում են, որ իրավահասկցումը գիտական կատեգորիա է, որն արտացոլում է մարդու նպատակուղղված մտածական գործունեության արդյունքն ու գործընթացը, որը ներառում է իրավունքի ճանաչումը, նրա ընկալումը, գնահատականը, ու նրա որպես ամբողջական սոցիալական երևույթի հանդեպ վերաբերմունքը[12]: Այստեղ, ըստ մեզ, ճիշտ է իրավունքի ճանաչման ու գնահատականի միավորումը իրավունքի ընկալման միասնական համակարգի մեջ: Սակայն հումանիտար ճանաչումը արդեն ենթադրում է վերաբերմունք, քանի որ մարդը ճանաչում է սոցիումը, որի մի մասն էլ ինքն է:

Իրավունքի հասկացման որպես իրավունքի մասին գիտելիքի համակարգի հետազոտությունը բովանդակվում է Ն.Դ. Ժելեզնովայի աշխատանքում, որն իրավահասկացում ասելով ենթադրում է «սոցիալական գործունեության հատուկ միջոց, որը ուղղված է իրավունքի գործարկման ընդհանուր օրինաչափությունների ճանաչմանը, ստացված գիտական գիտելիքի ձևով ներկայացմանը, ինչպես նաև ձևավորված տեսություններին ու հիմնադրույթներին որպես իրավական պրակտիկաների ընդհանուր ճանաչում ունեցող հիմունքների ներդրմանը, որն իրականանում է հատուկ գիտական-իրավական սոցիալական ինստիտուտների ու սուբյեկտների միջոցով հատուկ ձևում և ճանաչման հատուկ գիտական-իրավական գործիքավորման կիրառությամբ»[13]: Հեղինակը նպատակահարմար է համարում իրավահասկացման՝ որպես իրավունքի ձևավորման ընդհանուր օրինաչափությունների մասին գիտելիքների համակարգի մեկնաբանությունը, որոնք ճանաչվել են որպես տրամաբանորեն ու օբյեկտիվ առումով ճշմարիտ այս կամ այն հասարակության իրավաբանությունում:

Իրավահասկացման ծավալուն սահմանում է տալիս Պ.Ա. Օլը, ով ենթադրում է, որ իրավահասկացումը լայն իմաստով կարող է դիտարկվել որպես մտավոր (ինտելեկտուալ) գործունեություն, որն ուղղված է իրավունքի ճանաչմանը, ճանաչողական-իրավական գործունեության առանձին տարրերին՝ իրավական հարաբերությունների ընկալում, իրավական երևույթների ու իրավունքի մասին պատկերացում, ինչպես նաև մեկնաբանվող իրավական գիտելիքների միասնություն, որոնք ստացվել են ճանաչողական-իրավական գործունեության արդյունքում[14]:

Բոլոր վերոնշյալ սահմանումները բովանդակում են իրավահասկացման ուսումնասիրության մոտեցում իրավունքի ճանաչման տեսանկյունից: Նման մոտեցումը ենթադրում է իրավունքի հասկացության նույնականացում գիտական ճանաչման հետ: Ենթադրվում է, որ այս դեպքում խոսքը գնում է իրավունքի գիտական հասկացման մասին:

Մեր կարծիքով իրավահասկացումը անհրաժեշտ է վերլուծել ոչ միայն որպես փիլիսոփայական-իրավական կատեգորիա, այլ նաև որպես սոցիալական կյանքի երևույթ: Իրապես որպես փիլիսոփայական-իրավական կատեգորիա իրավա-

www.ardaradatutyunjournal.com

հասկացումը տալիս է պատասխան այն հարցին, թե ինչ է իրավունքը, ինչպիսին է նրա բովանդակությունը, հատկանիշները և էությունը, հիմնավորում է իրավունքի արժեքը և նրա գործողությունը: Միևնույն ժամանակ իրավահասկացումը, որը դիտարկվում է որպես սոցիալական կյանքի երևույթ, ունի լայն բովանդակություն ու հանդես է գալիս որպես գիտելիքների ու պատկերացումների կոնկրետ համակարգ, որն իր մեջ բովանդակում է ոչ միայն իրավունքի առաջացման, զարգացման, գործառնության համակցություն այլ նաև կոնկրետ իրավական երևույթ, որը շոշափելի է իրավահարաբերություններում և իրավակարգավորումներում:

Այսպիսով կարելի է ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

1) Իրավունքի ցանկացած տեսության կամ հիմնադրույթի հիմքում ընկած է նրա մասին որոշակի պատկերացում: Դրա համար էլ իրավունքի տեսությունները այդքան շատ են: Անգամ ճշգրիտ գիտություններում առկա են մի քանի տեսություններ, որոնք նկարագրում են այս կամ այն երևույթը, որոնք մի ժամանակ անց ճանաչվում են ճշմարիտ: Հումանիտար գիտություններում, որոնք ուսումնասիրում են առավել բարդ սոցիալական երևույթներ, օրինակ՝ իրավունքը ճանաչվում է հարաբերական կայուն փիլիսոփայական, տրամաբանական, իմացաբանական հիմնավորումների արդյունքում:

2) Իրավահասկացումից է կախված իրավունքի առաջացման մասին հարցին պատասխանը, նրա առաջացման ու ծագման ուսումնասիրությունը ենթադրում է այն մասին հարցին պատասխան, թե ինչ է արդյունքում առաջացել:

3) Իրավահասկացումը պատասխանում է ինչ է իրավունքը հարցին: Իրավունքի հասկացումը սկսվում է այդ հարցին պատասխանի որոնումից, և ավարտվում է մտահանգումների ձևով: Միջազգային, եկեղեցական, ծովային, ստվերային, ինտուիտիվ իրավունքները իրավունքի բանավիճային սահմանման օրինակներ են:

4) Իրավահասկացումից է կախված իրավունքի մեթոդաբանությունը, քանի որ իրավունքի էության մասին ուսմունքն իրենից ներկայացնում է նաև նրա ուսումնասիրության մեթոդի մասին ուսմունք, որպես բոլոր հիմնական մեթոդների դիտարկում, որը թույլ է տալիս հաստատել, որ դրանք բոլորը ձևավորված են իրավահասկացման որոշակի տեսակների միջոցով, այսինքն իրավունքի էության մասին բացահայտումներով: Օրինակ՝ ֆորմալ-դոգմատիկ մեթոդը մշակված է իրավաբանական պոզիտիվիզմի և նորմատիվիզմի շրջանակներում, որոնք մեկնաբանում են իրավունքը որպես սուվերենի հրաման, նորմերի աստիճանակարգ կամ համակարգ, որոնք սահմանվում են պետության կողմից, սոցիոլոգիական մոտեցումը հասնում է մինչև իրավաբանների պատմական դպրոց, ովքեր ուշադրություն են դարձրել սովորական իրավունքի վրա, հասարակությունում տարերայնորեն ձևավորված վաքագծային կանոնների վրա, հոգեբանական մեթոդը հասնում է մինչև Պետրաժիցկու իրավական հոգեկանի մասին ուսմունքը՝ բնական-իրավական մոտեցումը կամ իրավահասկացման տեսակը ծնել է աքսիոլոգիական մեթոդը, սոցիոլոգիական իրավահասկացումը առաջացրել է իրավունքի որոնումները կոնկրետ հասարակական հարաբերություններում:

Եզրակացություն

Իրավունքի ժամանակակից տեսությունը ձևավորվել է իրավունքի էության մասին տարբեր մոտեցումների ազդեցության ներքո: Յուրաքանչյուր հասկացություն, դատողություն կամ տեսական կառույց առաջացել է այս կամ այն պետական-իրավական դոկտրինի շրջանակներում:Նանք բոլորն էլ ազդել են իրավունքի ընդհանուր տեսության զարգացման վրա:

Ընդհանրացնելով հեղինակների հիմնադրույթները՝ կարելի է նշել ժամանակակից հիմնական միտումները իրավահասկացման տեսության զարգացման մեջ՝ բնական ու պոզիտիվ իրավունքի տեսությունների ինտեգրացիայի կամ համադրության անհրաժեշտության գիտակցումը, ազատական-իրավաբանական հայեցակարգի բովանդակային զարգացումը և սոցիոլոգիական իրավահասկացության ներթափանցումը իրավական ոլորտում (ազատ իրավահայեցողություն և այլն):

[1] Տե՛ս Фридмэн Л., Введение в американское право. М., 1992, с.8.
[2] Տե՛ս Лапаева В.В. Различные типы правопонимания: анализ научно-прагматического потенциала//Законодательство и экономика.2006. N 4. с. 5-6.
[3] Տե՛ս Трубецкой Е.Н. Энциклопедия права, СПБ, 1998,с.14.
[4] Տե՛ս Байтин М.И. Сущность права. Саратов, 2001, с. 55-56.
[5] Մանրամասն տե՛ս Ստեփանյան Հ.Մ. Իրավունքի փիլիսոփայություն: Երևան, 2016, էջ 15-22: Нерсесянц В.С. Философия права.М., Норма ,2006, с. 1-7.
[6] Տե՛ս Берман Г. Дж., Западная традиция права: эпоха формирования.М., 1994, с.1б-17,22,57, Честное И.Л. Диалогическая онтология права и ситуации потстмодерна//Правоведение.2001. N36 Графский В.Г., Проблемы создания обновленной концепции юриспруденции//Государство и право.2003,N5,с.14.
[7] Տե՛ս Овчинников А.И. Правовое мышление в герменевтической парадигме. Ростов Н/Д, 2002, с.20.
[8] Տե՛ս Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, էջ 29-30:
[9] Տե՛ս Овчинников А.И., Правовое мышление в герменевтической парадигме.С.22-23.
[10] Տե՛ս Туманов В.А., Учения о праве//Общая теория права М., 2016, с.21-22:
[11] Տե՛ս Попов В.И., Правопонимание в советской юридической науке: Автореф. дис. ... канд. юрид. наук.М., 2001,с.8.
[12] Տե՛ս Теория государства и права/под ред. В.М. Корельского,В.Д. Перевалова,М., 1998, с.217.
[13] Տե՛ս Железнова Н.Д. Правопонимание и судебная практика: теоретические проблемы взаимодействия автореф.дис.... канд. юрид. наук. Н. Новгород,2001, с.14.
[14] Տե՛ս Оль П.А., Правопонимание:от плюрализма к двуединству. М., с.16.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Фридмэн Л., Введение в американское право. М., 1992, с.8.
2. Лапаева В.В. Различные типы правопонимания: анализ научно-прагматического потенциала//Законодательство и экономика.2006. N 4. с. 5-6.
3. Трубецкой Е.Н. Энциклопедия права, СПБ, 1998,с.14.
4. Байтин М.И. Сущность права. Саратов, 2001, с. 55-56.
5. Մանրամասն տե՛ս Ստեփանյան Հ.Մ. Իրավունքի փիլիսոփայություն: Երևան, 2016, էջ 15-22: Нерсесянц В.С. Философия права.М., Норма ,2006, с. 1-7.
6. Берман Г. Дж., Западная традиция права: эпоха формирования.М., 1994, с.1б-17,22,57,
7. Честное И.Л. Диалогическая онтология права и ситуации потстмодерна//Правоведение.2001. N36 Графский В.Г., Проблемы создания обновленной концепции юриспруденции//Государство и право.2003,N5,с.14.
8. Овчинников А.И. Правовое мышление в герменевтической парадигме. Ростов Н/Д, 2002, с.20. /22–23/
9. Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, էջ 29-30:
10. Туманов В.А., Учения о праве//Общая теория права М., 2016, с.21-22:
11. Попов В.И., Правопонимание в советской юридической науке: Автореф. дис. ... канд. юрид. наук.М., 2001,с.8.
12. Теория государства и права/под ред. В.М. Корельского,В.Д. Перевалова,М., 1998, с.217.
13. Железнова Н.Д. Правопонимание и судебная практика: теоретические проблемы взаимодействия автореф.дис.... канд. юрид. наук. Н. Новгород,2001, с.14.
14. Оль П.А., Правопонимание:от плюрализма к двуединству. М., с.16.

АРМЕН ШУКУРЯН
советник отдела протокола Аппарата Премьер-министра Республики Армения,
координирующий отдельные функции в структурных подразделениях,
старший научный сотрудник Института философии, социологии и права НАН РА,
кандидат юридических наук, доцент,
преподаватель Армянского государственного педагогического университета

РЕЗЮМЕ
Правопонимание в системе юридического знания

В статье автор обстоятельно проанализировал современные концептуальные подходы к праву и правопониманию, их содержательные особенности, теоретическое и прикладное значение. Восприятие права представляет собой особый вид интеллектуальной деятельности. Проблема восприятия все чаще привлекает внимание современных исследователей, в том числе тех, кто занимается проблемами философии науки, философии познания, философии права. Поэтому теоретико-методологический анализ процесса восприятия права неизбежно затрагивает вопросы его методологии, разработка которых традиционно считается первоочередной для теории права.

Проблема правопонимания, безусловно, имеет гораздо большее значение для юридической науки, предмет которой как раз и составляют собственно правовые явления. Лишь сформировав правильное, четкое представление о том, что такое право, можно выявить не только перспективы развития юридической науки и повышения ее эффективности, но и решить задачи нормотворчества, применения и толкования права, законности и правопорядка, построения цивилизованного гражданского общества и правового государства.

Ключевые слова: право, законность, правовой порядок, правовое государство, юридическая наука, правопонимание, юридические знания.

ARMEN SHUKURYAN
Advisor of the Protocol Department of the Staff of the Prime Minister of the
Republic of Armenia, coordinating certain functions within structural divisions,
Senior Researcher at the Institute of Philosophy, Sociology and Law
of the National Academy of Sciences of the RA,
Candidate of Legal Sciences, Associate Professor,
Lecturer at the Armenian State Pedagogical University

SUMMARY
Legal understanding in the system of legal knowledge

In the article, the author has thoroughly analyzed contemporary conceptual approaches concerning law and legal understanding, their substantive features, and their theoretical and practical significance. The perception of law constitutes a special type of intellectual activity. The problem of perception increasingly attracts the attention of modern researchers, including those who deal with the issues of the philosophy of science, philosophy of cognition, and philosophy of law. Therefore, a theoretical and methodological analysis of the process of perceiving law inevitably touches upon questions of its methodology, the development of which is traditionally considered a priority for the theory of law.

The problem of legal understanding, undoubtedly, is of much greater significance for legal science, the subject matter of which consists precisely of legal phenomena proper. Only by forming a correct and clear understanding of what law is can one determine not only the prospects for the development of legal science and for increasing its effectiveness, but also solve the problems of norm-making, application and interpretation of law, legality and legal order, and the construction of a civilized civil society and a rule-of-law state.

Key words: law, legality, legal order, rule-of-law state, legal science, legal understanding, legal knowledge.

Ընդունվել է տպագրության 24.03.26թ.